

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

«_____» 2021 թվական N ____Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր ո շ ու մ է.**

1. Որպես նվիրաբերություն Հայաստանի Հանրապետությանը ընդունել սույն որոշման հավելվածով սահմանված ցանկում ընդգրկված նվիրաբերողների կողմից տրամադրված 1800 միավոր շարժական գույքը (այսուհետ՝ գույք) և այն ամրացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում հեռավար կրթության կազմակերպման նպատակով:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) հեռավար կրթության կազմակերպման նպատակով գույքը բաշխել ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներին.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել որոշման նախագիծ՝ փաստացի բաշխված գույքը հեռավար կրթության կազմակերպման նպատակով դպրոցներին, որպես նվիրաբերություն տրամադրելու մասին:

Վարչապետ՝

Ն.Փաշինյան

2021 ----- ---

ՑԱՆԿ
ՆՎԻՐԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

	Նվիրաբերող կազմակերպության անվանումը	Գույքի անվանումը	Տարեթիվը	Միավորի գինը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/	Քանակը	Արժեքը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/
1.	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակչակ ան կենտրոն	Պլանշետ Irbis TZ897, 8,0” Android 8.1+MT8735GMS RAM 2GB SSD 16GB 4000mAh 5,0Mpx	2020	34042,812	1000	34042812
		Պլանշետ Alcatel Tablet 3T 10”	2020	81600	300	24480000
2	«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ	Սմարթֆոն Xiaomi Redmi 8 3/32GB Blak	2019	69900	202	14119800
		Xiaomi Redmi 8 3/32GB Blue	2019	69900	134	9366600
		Xiaomi Redmi 8 3/32GB Red	2019	69900	47	3285300
		Xiaomi Redmi 8 4/64GBBlue	2019	77900	117	9114300
		ընդամենը				35886000
	ընդամենը				1800	

«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և ամրացնելու մասին»

**Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության
վերաբերյալ**

«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և ամրացնելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Նոր տիպի կորոնավիրուսային համավարակի (COVID-19) տարածումը կանխարգելող միջոցառումների շրջանակում՝ հիմնական հանրակրթական ծրագրերի հեռավար կրթության միջոցով կազմակերպելու նպատակով կարիքավոր ընտանիքների երեխաներին համապատասխան տեխնիկական միջոցներ (պլանշետ կամ հեռախոս) տրամադրելու և Երեխաների կրթության իրավունքի երաշխավորման պահանջից բխող սույն որոշման նախագծում նշված կազմակերպությունների կողմից ցուցաբերած մարդասիրական քայլով:

Հեռավար կրթության կազմակերպմանը աջակցելու նպատակով կազմակերպությունների կողմից տեխնիկական սարքավորումները ի պահ են հանձնվել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և ըստ ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված պահանջարկի դրանք վերջիններիս կողմից կհանձնեն համապատասխան դպրոցներին:

«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և ամրացնելու մասին» Կառավարության որոշման նախագծով աջակցություն կցուցաբերվի Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներին: Հեռավար կրթության կազմակերպման հարցում նախատեսվում է կազմակերպությունների կողմից 1800 միավոր շարժական գույքը սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներին՝ համաձայն Հավելվածի և Նվիրաբերող կազմակերպությունները կազատվեն ԱԱՀ-ից:

**«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և ամրացնելու մասին»
Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի
Հանրապետության կառավարության պետական բյուջեում ծախսերի և
եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին**

«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնի:

**«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և ամրացնելու մասին»
կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից
ստացված առարկությունների և առաջարկությունների ամփոփման վերաբերյալ**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացու- թյուն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ Արմավիրի մարզպետարան 23.11.2020թ. հ. 01 /11.1/06888-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Շիրակի մարզպետարան 23.11.2020թ. հ. 01 //11486-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Լոռու մարզպետարան 23.11.2020թ. հ. 01 /106,3,10/11523- 2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան 24.11.2020թ. հ. 01 /09.1/7372-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Արարատի մարզպետարան 24.11.2020թ. հ. 01 //10631-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան 24.11.2020թ. հ. 01 //7845-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Արագածոտնի մարզպետարան 25.11.2020թ. հ. 01 /4/05809-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Կոտայքի մարզպետարան 25.11.2020թ. հ. 01.1 /06.1/08506-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Սյունիքի մարզպետարան 25.11.2020թ. հ. 01 //06640-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
ՀՀ Տավուշի մարզպետարան 27.11.2020թ. հ. 02//06982-2020	Առաջարկություններ և առարկություններ չունեն		
Երևանի քաղաքապետարան 02.12.2020թ.հ.01/7- 117539/հ	Առաջարկություններ և առարկություններ չունեն		

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 27.11.2020թ. հ. ՍՊ//32678-2020	Առաջարկում է 1. Նախագծի 1-ին կետի «ՀՀ հանրակրթական դպրոցներին բաշխված» ձևակերպումը հստակեցման կարիք ունի, քանի որ Նախագծի հավելվածի վերջին սյունակից հետևում է, որ բաշխումը կատարված է ոչ թե ըստ ՀՀ հանրակրթական դպրոցների, այլ՝ ՀՀ մարզերի: Նշվածի հիմքով անհրաժեշտություն է առաջանում վերանայելու Նախագծի 2-րդ և 3-րդ կետերի համապատասխանաբար «ՀՀ մարզպետներին» և «Երևանի քաղաքպետին» ձևակերպումները: 2. Նախագծի 1-ին կետի «N1» թիվը փոխարինել «սույն որոշման» բառերով՝ նկատի ունենալով, որ Նախագիծն ունի անբաժանելի մաս համարվող ընդամենը մեկ հավելված: Նշվածի հիմքով «N1» թիվը հանել Նախագծի հավելվածից: 3. Նախագծի 2-րդ և 3-րդ կետերի «մեկամսյա» բառերից առաջ լրացնել «սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո» բառերը, իսկ նույն կետերի «հավելվածներում» բառերը փոխարինել «հավելվածում» բառերով: 4. Որպես նորմատիվ իրավական ակտի վավերապայման՝ Նախագծի վերջում լրացնել այն ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը:	1. Քննարկվել է 2. Քննարկվել է 3. Քննարկվել է 4. Քննարկվել է	1. 2-ի ընդունվել, քանի որ նշված սարքավորումները ՀՀ մարզային և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունների կողմից բաշխված են ՀՀ հանրակրթական դպրոցներին 2. կատարվել է համապատասխան փոփոխություն: 3. կատարվել է համապատասխան փոփոխություն: 4. կատարվել է համապատասխան փոփոխություն:
Պետական եկամուտների կոմիտե 01.12.2020թ. հ. 01/3.1/75282-2020	1. Նախագծի նախաբանում, որպես վերջինիս ընդունման իրավական հիմք, հղում է կատարված ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասին, համաձայն որի՝ Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ, իսկ իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ի:	1. Քննարկվել է	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ նախագծի շրջանակներում, մասնավորապես՝ 1-ին կետում, կանոնակարգված են գույքի նվիրաբերության հարաբերություններն ու նպատակային օգտագործումը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ

	Նշվածի հետ կապված հարկ է հայտնել, որ Նախագծի շրջանակներում կանոնակարգվում են ՀՀ կառավարության կողմից ՀՀ հանրակրթական դպրոցներին բաշխված համապատասխան գույքը որպես նվիրաբերություն ընդունելու հետ կապված հարաբերությունները: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի նախաբանում հղում կատարված ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը վերաբերում է ավելացված արժեքի հարկով հարկման բազայի որոշման առանձնահատկություններին՝ անհատույց գործարքների դեպքում, իսկ Նախագծի շրջանակներում կանոնակարգվում են որպես նվիրատվություն համապատասխան գույք ընդունման հետ կապված հարաբերությունները՝ հայտնում ենք, որ հղում կատարված վերոնշյալ իրավական դրույթը չի վերաբերում Նախագծի առարկային, հետևաբար առաջարկում ենք հանել այդ հղումը:		ում հեռավար կրթության կազմակերպումը:
Ֆինանսների նախարարություն 30.11.2020թ. հ.01/8-3/17577-2020	1. Նախագծի 1-ին կետով նախատեսվում է՝ որպես նվիրաբերություն ընդունել ՀՀ հանրակրթական դպրոցներին բաշխված, N1 հավելվածում նշված նվիրաբերողների կողմից տրված 1800 միավոր շարժական գույքը (այսուհետ՝ Գույք)՝ հեռավար կրթության կազմակերպման նպատակով, ինչի կապակցությամբ առաջարկում ենք հստակ նշել, ում է նվիրաբերվում: Բացի այդ, ըստ Նախագծի 2-րդ և 3-րդ կետերի՝ կարգավորվում են «<i>հավելվածներում նշված գույքերի</i>» նվիրաբերության պայմանագրերի կնքման հետ կապված հարաբերությունները, սակայն Նախագիծն ընդամենը մեկ հավելված ունի: 2. Նախագծին կից ներկայացվել է «Գերատեսչությունների կողմից տրամադրվող համակարգիչների և բաշխման վերաբերյալ» ցանկ (այսուհետ՝ Ցանկ), որն անհրաժեշտ է ներկայացնել հավելվածի տեսքով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասը, համաձայն որի՝ «Նորմատիվ իրավական	1. քննարկվել է	1. կատարվել է համապատասխան փոփոխություն: 2. «Գերատեսչությունների և ընկերությունների կողմից տրամադրվող համակարգիչների բաշխման վերաբերյալ» ցանկը կցվել է ընդհանուր տեղեկատվության իմաստով և նշված

	ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով: Հավելվածներն առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղում են պարունակում այդ հավելվածներին»: Միաժամանակ հայտնում ենք, որ Յանկի 23-րդ տողում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված համակարգչային տեխնիկայի մասին տեղեկատվությունը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև 19.05.2020թ. կնքված պահատվության պայմանագրի (կցվում է) հավելված 1-ի գույքի ցանկի հետ:		Նախագծին անմիջական չի առնչվում
Արդարադատության նախարարություն 30.12.2020թ. հ. 01/27.1/29980-2020	Նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը» բառերը և նախագծի 4-րդ կետը՝ նկատի ունենալով, որ դրույթը սույն որոշման կարգավորման առարկան չի հանդիսանում:	<i>Քննարկվել է և ընդունվել է մասամբ</i>	1.Նախագծի նախաբանից հանվել «և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը» բառերը և նախագիծը լրամշակվել է,